

ԹՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Թոմանոս Մելիքեանը ծնուել է 1883 թուին Հիւսիսային Կովկասի Ղզլար քաղաքում : Մանուկ Թոմանոսի բացառիկ ընդունակութիւնը, ստիպում է իր շրջապատին լուրջ կերպով մտածել նրա երաժշտական կրթութեան մասին : Հայրը (աշխատաւոր այգեպան) տնտեսական ծանր պայմաններու տակ ուղարկում է որդուն Ռոտովի Երաժշտական Դպրոցը, ուր մի քանի տարիներում Թոմանոսը աչքի է ընկնում թէ՛ իրրեւ ստեղծագործող եւ թէ՛ իրրեւ երգեցիկ խմբեր զեկավարող :

Այդ ժամանակամիջոցում, պատանի Թոմանոսը ծանօթանում է զերասանուհի Սիրանոյշին . վերջինս, իր զեղարուեստագէտի բարձր հասկացողութեամբ, կարողանում է ներչնչել Թոմանոսին՝ արուեստի բարձր խաւերին հասնելու անհրաժեշտութիւնը : Եւ ահա Թոմանոսը տնտեսական ամենալժուար պայմաններով մեկնում է Մոսկվայի Կոնսերվատորիան, ուր, մի կողմից ուսանելով, միւս կողմից լազարեան ճեմարանի մէջ երգեցողութեան դասեր աւանդելով, շարունակում է իր ուսանողական շրջանը, աշակերտելով յայտնի երգահաններ Տանիեւին եւ Խոլոպիտով - Իվանովին :

Թոմանոսի ուսանողական շրջանը որոշ ժամանակ ընդհատւում է . նա հրաւիրւում է Թիֆլիզ, զբաղւելու երաժշտական - մանկավարժական ասպարէզում : 1911 թուին մեկնում է Պետերբուրգի Կոնսերվատորիան, ուր երիտա-


սարդ արուեստագէտը վերջացնում է իր երաժշտական բարձր ուսումը 1915 թուին :

Թոմանոս Մելիքեանը, իրրեւ հասարակական - երաժշտական գործիչ, ունի իր երեսնամեայ արդիւնաշատ ճանապարհը . թէ՛ Թիֆլիզում, թէ՛ Հայաստանում նա մեծ զեր է ունեցել, մեր հասարակական - երաժշտական կազմակերպելու բոլոր բնագաւառներում :

1921 թուին Խորհ. Հայաստանի կառավարութիւնը հրաւիրում է Թոմանոսին, Երեւանում կազմակերպելու առաջին երաժշտական ստուդիան . Թոմանոսը ամբողջ կութեամբ նույիրուելով այդ աշխատանքին՝ իրը եւ զեկավար՝ կարճ ժամանակամիջոցում Երեւանի առաջին երաժշտական Ստուդիան գնում է լաւագոյն հիմքերի վրայ, եւ սա յետագայում փոխւում է Կոնսերվատորիայի :

Վերջին տասներեք տարուայ մեր կառուցուող Խորհ. Հայաստանում, երաժշտական կուլտուրայի աճման մէջ, — մեթոդական, մանկավարժական, պատմագիտական եւ մասսայական, — մենք տեսնում ենք Թոմանոսին միշտ առաջաւոր շարքերում . Նա մեր Խորհ.

(1) Այն պահուն ուր կը շարուէր այս յօդուածը՝ զոր դաշնակահարուիի տիկին Աղանի Մեսրոպիան մեզի դրկած է Երեւանեն, ամենախորին ցաւով իմացանք տաղանդաւոր երաժիշտին յանկարծական մահը՝ սրտի պայրում :



ՈՒՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Հայաստանում ամենաժողովրդականացած եւ սիրուած երաժշտագէտն է:

ՈՒՄԱՆՈՍԸ ԻԲՐԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ
ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ
ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1907 թուին, իբրեւ սկսնակ ստեղծագործող, նաև հիւսեց իր «Աշնան տողեր»ը, «Անջատում», «Վայրի ծաղիկ», «Վարդը», «Ուռենի» (դուէտ) երգերու շարանը, որոնք հակառակ իրենց երաժշտական արժանիքներին, եւ ժամանակին լայն մասսաներու կողմէ մեծ ընդունելութիւն գտնելուն, իրենց կառուցուածքով ուսւական դպրոցի ազդեցութեան տակ զրուած լինելով, չկարողացան բնորոշել Ռոմանոսի հարազատ հոգին:

Երիտասարդ արուեստագէտը հիասթափուած՝ անհարազատ որոնումներից, թօթափելով սեղմ կաշկանդումները, կարողանում է նետուիլ իր հարազատ՝ հայ ժողովրդական երաժշտութեան ուսումնասիրական ճանապարհին, ուր իւրացնելով ժողովրդական երգի ոճը, ինքնուրոյն ոիթմը, եւ միացնելով նրանց իր հմուտ երաժշտագէտի հարուստ յուզմունքներին եւ գեղարուեստականօրէն պատկերելու բարձր հասկացողութեանն, նա կերտում է իր հրաշալի «Զմրուխտ» երգերու շարանը: Այդ երգերու կառուցուածքով տաղանդաւոր արուեստագէտը յայտնաբերում է դաշնամուրային գաղտնիքներուն տիրապետող վարպետ էնսթրիւմանթալիստ մը լինելուն անժխտելի հանգամանքը:

Ռոմանոսը իւրայատուկ ճաշակով մշակել է ժողովրդական բազմաթիւ երգեր:

Նոյեմբերեան յեղափոխութիւնից յետոյ, Ռոմանոսը իբրեւ հիացող ականատես մեր կառուցուող Հայրենիքի շինարարութեան, կարողացաւ պայծառ վարպետութեամբ գրսեւորել աշխատաւորութեան թափը եւ խանդավառութիւնը իր Կարմիր բանակայիններու, աշխատաւորներու, պիոններներու, մինչեւ հոկտեմբերիկներու նուիրուած երգերուն մէջ: Տաղանդաւոր արուեստագէտ հեղինակի մասսայական եւ կենցաղային այս երգերը մեծ ոգեւորութեամբ արձագանգում են մեր Ռորհ. Հայաստանի ամէն անկիւններից:

Ռոմանոս Մելիքեանը լինելով մեր լաւագոյն հիմնադիրներից, իբրեւ կուլտուրական հայ ինքնուրոյն երգ ստեղծող, մենք քաջայոյս ենք որ նրա երաժշտական ստեղծագործութեան երես - նամեայ երկար ուղին իր շարունակութեան մէջ պիտի հասնի իր բարձրակատին:

Ա.ՋԱ.ԽՆ.Ի ՊԵՏՐՈՍԵԱՆ

(Երաժշտական Միութեան անդամ)
Երեւան 12 Փետր. 1935.